Դանիել Վարուժան

Վաղվան բողբոջներ

Երբ արտին մեջ երգելով,
Խաղա՛ղ հոգի, կ'աշխատեր,
Ըսպաննեցին: Տարին եզները ջուխտակ:
Վրկա չրկար: Պիտի վրեժն ո՞վ կըշռե. Դո՛ւ,
Ո՛վ շանթ, անոնց ետևեն շուտ դու հասիր,
Որ լերան վրա ամպամած
Խոժոռադեմ կը հրսկես.
Անշուշտ տեսար ամպի մը մութ բացվածքեն՝
Թե ինչպես վարը բրոնի,
Յաթաղանին տակ սրրբազան բահն ինկավ,
Եվ պոռթկաց խոնջ ճակատեն
Արյունը տաք, վարդերուն պես հունիսի:
Գայլի՛ եղեռն: Մրթընշաղին մեջ հիմակ
Ակոսներուն վրրա լուռ
Բրգիկ բրգիկ կը պառկի:
Գյուղացիի խորշոմներուն մեջ աղվոր՝
Ուր արեգակն առողջ արյունն եռեփեց
Քրրտինքը ա՛լ սառած է.
Աշխատանքի քրրտինքը սուրբ ու բեղուն
Որ մինչ այսօր, ինչպես արյունը, եղավ
Մրկրրտություն Արարատյան մշակներուն:
Հերկե խոնջած բազուկներն ա՛լ անգործ են.
Կուրծքը մրռայլ, թավամազ,

Դեպի աստղերը, արձակ,
Շեջ հրաբուխ մ'է որ կ'ուզե բոց երկընքեն
Դեպ Անհունին սև սառնության ժայթքելու.
Կողը տված է հողին
Զոր մըշակեց ամրան դեղին հասկերուն
Երազանքեն ժըպտելով:
Շարժմամբ աճած, աղվոր, զորեղ իր մարմնեն
Արյունը խուլ դըղրըշյունով կը հոսի.
– Կարմի՛ր հեղեղ, սըրտի խորեն վար իջած –
Տափանն ու թին ներկելով
Կ'երթա գուղձերն ողողել.
Ակոսներուն մեջ զետեղել լիազոր
Կարողություն մ'արեգակի, անձրևի.
Թափանցել մութ ծոցն երկրին,
Իբրև ըլլար մարգարեի մըտածում,
Եվ հոն ճըռոցած հունտերուն մեջ ներշընչել
Ուռչում մ'ատոք և առույգ,
Դարձընելով կյանք մ'իր առջի օրոցքին,
Նոր ծաղկումի մը համար,
Եվ հոն հըծծել նախնիքներու փոշիին
Թե – մինչ ե՞րբ իր արյամբ
Հայ գյուղացին պիտի արտն իր ոռոգե:

Կը լըռե շուրջն ամեն իր:
Լուսնին լացող աչքերուն
Ամպերը թուխ թաշկինակներ կը դառնան.
Խավարն հոծ է, սև պատանք:
Հեռուն կնոջ մ'հոգին տարտամ կասակծով
Գիշերվան մեջ կը սպասե.
Զուխտ որդիներն ինկած ծունկին գըգվանուշ
Հույսի մը մեջ վաղամահ, զերդ ծիածան,
Հեծկըլտանքնին կը խեղդեն:
... Ահե՛ղ հանգիստ. դիակին քով արյունոտ

Կյանք մը ծաղկի, աստղի առկայծ ճաճանչներ,
Զույգ մը բիբեր, զույգ մ'հոգեվարք կայծոռիկ,
Արտին մեջ շունչ մ'հովերու
Մեռնող սուրբի մ'հուսկ սաղմոսին պես տըխուր,
Խորշոմներուն և իր գեղջուկ լռիկին
Ծալքերուն մեջ արևու
Ջերմություն մ'հուր, երգ մը հովեն սորվեցված,
Քըրտինքի շիթ մը սարսռուն,
Հողի բույրեր, կըծու բույրեր ծոթրինի,
Այլևս անդարձ, անվըրեժ, լուռ կը մեռնի՛ն...
Ո՛չ, հանուն հայ մռունչներուն,
Թափված արյունն անմեղին չի՛ մեռնիր. Ո՛չ...
Վաղն հողը դուրս պիտ' պոռթկա
Արևուն տակ հասկեր առլի, կյանք մը նոր,
Նոր և հըսկա, հըսկայացած դիակով,
Բողբոջ մ'առույգ, գեղեցիկ,
Վաղն այս բարի արյունեն վեր պիտ' ելլեն
Խառնըվելով ցորենին
Նոր Սերունդի կարմիր կարմիր կակաչներ,
Որոնց արմատը կը դըպչի, պայթման մոտ,
Վարն հրաբուխի մ'ապագա…